Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյան

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Արարատ Գրիգորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել՝

1. Այս պահի դրությամբ Վայոց ձորի մարզում քա՞նի դպրոց է դասապրոցեսն իրականացնում առկա եղանակով, քա՞նի դպրոց՝ հեռավար (հնարավորության դեպքում նշել համայնքներն ու քաղաքները),

2. Այն դպրոցներում, որտեղ դասապրոցեսը հեռավար է իրականացվում, արդյո՞ք բոլոր աշակերտներն ու ուսուցիչներն են ապահովված համապատասխան տեխնիկայով և ունե՞ն արդյոք ինտերնետի հասանելիություն,

3. Հընթացս վերահսկվու՞մ է դասապրոցեսը՝ գնահատելու առկա խնդիրներն ու անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու,

4. Հատկապես ի՞նչ խնդիրներ կան ու լուծման ի՞նչ եղանակներ են առաջարկվել,

5. Հեռավարից առկա դասապրոցեսի անցնելու մոտավոր ժամկետներ կարո՞ղ եք նշել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին(հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ:

Ժուռնալիստ.am-ի թղթակից Քնարիկ Վարդանյան

01.10.2022

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 7917
14 10 2022